

Ավան համայնքի Վարուժան թաղամասի N 8, 9 և 10 բազմաբնակարան շենքերի ջեռուցման վերաբերյալ բնակիչների կարծիքի ուսումնասիրություն

Ավան համայնքի Վարուժան թաղամասի N 8, 9 և 10 բազմաբնակարան շենքերը ընդգրկված են «Հայրուսկոգեներացիա» ՓԲԸ կողմից Ավան թաղամասի ջեռուցման առաջնեկային ծրագրում: Կաթսայատունը և շենքերի ջեռուցման համակարգը լրիվ պատրաստ են և փորձարկվել են, իսկ ներբնակարանային ջեռուցման համակարգն ըստ ներդրողի տվյալների, լրիվ պատրաստ կլինի 2008թ. հունվարի վերջին:

Ս.թ. դեկտեմբերի 22-ին Ավան համայնքում տեղի է ունեցել Վարուժան 8, 9 և 10 բազմաբնակարան շենքերի բնակարանատերերի կարծիքի ուսումնասիրություն շենքերը կենտրոնացված եղանակով ջեռուցելու վերաբերյալ: Հարցումն իրականացնում էին UNDP/GEF «Հայաստան. Քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագրի 4 փորձագետներ և «Հայրուսկոգեներացիա» ՓԲԸ-ի 5 աշխատակիցներ:

Հետազոտությունը կատարվել է համընդհանուր եղանակով, այսինքն, հարցման են ենթարկվել այդ օրը տանը եղած բոլոր բնակարանատերերը:


Հարցման մասնակիցների գերակշռող մասը ընտանիքի կոմունալ ծառայությունների հարցերով զբաղվող անդամն է:

Արդյունքների վերլուծություն

1. Վարուժան 8

Շենքը կառուցվել է 1986թ., այն 9 հարկանի 2 մուտքանի երկաթբետոնե կոնստրուկցիաներով շենք է ունի 36 բնակարան. 2 հատ` մեկ սենյականոց և 34 հատ` երեք սենյականոց:


36 բնակարանատերերից հարցմանը մասնակցել են 26-ը, 10 բնակարանատեր` բացակայում էր: Ջեռուցում ցանկացել են ստանալ 10 բնակարանատեր` հարցվածների 38.5%-ը, չեն ցանկացել` 16 բնակարանատեր կամ հարցվածների 61.5%-ը:



Գծազիր 1. Կաթսայատնից ջեռուցում ցանկացողների և չցանկացողների հարաբերակցությունը:

Չցանկացողներն իրենց հրաժարվելը բացատրում են հետևյալ պատճառներով.

- ✓ 10 բնակարանում կամ 62.5%-ը տեղադրված է անհատական ջեռուցման կաթսա
- ✓ 5 բնակարանատեր կամ 31.2%-ը հրաժարվում է այլ պատճառներով
- ✓ 1 բնակարանատեր կամ 6.3%-ը բնակարանը տրվում է վարձով և ցածր գնով:



- հրաժարվել է այլ պատճառներով
- Տեղադրված է ջեռուցման կաթսա
- Վարձով է տալիս


Գ

Ճազիր 2. Կաթսայատնից ջեռուցման հրաժարման պատճառները

2. Վարուժան 9

Շենքը կառուցվել է 1986 թ., այն, 9 հարկանի 2 մուտքանի երկաթբետոնե կոնստրուկցիաներով շենք է, ունի 36 բնակարան. 2 հատ՝ մեկ սենյականոց և 34 հատ՝ երեք սենյականոց:

Հարցմանը 36 բնակարանատերերից մասնակցել են 18-ը, 18 բնակարանատեր՝ բացակայում էր: Ջեռուցում ցանկացել են ստանալ 3 բնակարանատեր կամ հարցվածների 16.6%-ը, չեն ցանկացել՝ 15 բնակարանատեր կամ հարցվածների 83.4%-ը:




- Ցանկանում են
- Չեն ցանկանում

ԳՃազիր 1. Կաթսայատնից ջեռուցում ցանկացողների և չցանկացողների հարաբերակցությունը:

Չցանկացողներն իրենց հրաժարվելը բացատրում են հետևյալ պատճառներով.

- ✓ 6 բնակարանում կան 40 %-ը տեղադրված է անհատական ջեռուցման կաթսա,
- ✓ 8 բնակարանատեր կան 53.3%-ը հրաժարվում է այլ պատճառներով
- ✓ 1 բնակարանատեր կան 6.7%-ը բնակարանը տրվում է վարձով է ցածր գնով:




- հրաժարվել է այլ պատճառներով
- Տեղադրված է ջեռուցման կաթսա
- Վարձով է տալիս

Գծագիր 2. Կաթսայատնից ջեռուցման հրաժարման պատճառները

3. Վարուժան 10

Շենքը կառուցվել է 1986 թ., այն 9 հարկանի 2 մուտքանի երկաթբետոնե կոնստրուկցիաներով շենք է և ունի 36 բնակարան. 2 հատ՝ մեկ սենյականոց և 34 հատ՝ երեք սենյականոց:

Հարցմանը 36 բնակարանատերերից մասնակցել են 26-ը, 10 բնակարանատեր՝ բացակայում էր: Ջեռուցում ցանկացել է ստանալ 7 բնակարանատեր, կան հարցվածների 27 %-ը, չեն ցանկացել՝ 19 բնակարանատեր կան հարցվածների 73 %-ը:




- Ցանկանում են
- Չեն ցանկանում

Գծագիր 1. Կաթսայատնից ջեռուցում ցանկացողների և չցանկացողների հարաբերակցությունը:

Չցանկացողներն իրենց հրաժարվելը բացատրում են հետևյալ պատճառներով.

- ✓ 10 բնակարանում կան 52.6 %-ը տեղադրված է անհատական ջեռուցման կաթսա

- ✓ 7 բնակարանատեր կան 36.9%-ը հրաժարվում է այլ պատճառներով
- ✓ 2 բնակարանատեր կան 10.5%-ը բնակարանը տրվում է վարձով ցածր գնով:



Գծագիր 2. Կաթսայատնից ջեռուցման հրաժարման պատճառները

Ամփոփում

Ուսումնասիրությունից պարզվել է, որ վերոնշյալ հասցեներում կենտրոնացված ջեռուցման վերականգնման հավանականությունը կախված է նրա շահագործման ժամկետներից: Որքան այն հետաձգվի, այնքան ավելի քիչ բնակարանատեր կմիանա համակարգին, մինչ այդ ինչ որ ձևով լուծելով իր բնակարանի ջեռուցման խնդիրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայրուսկոզեներացիա» ՓԲԸ կողմից Ավան համայնքի Վարուժան թաղամասի N 8, 9 և 10 բազմաբնակարան շենքերն ընդգրկված են փորձնական ծրագրում և համակարգը կշահագործվի ջեռուցում ցանկացողների թվից անկախ, ապա կարելի է կանխատեսել, որ ջերմամատակարարման ծառայությունների բարձր մակարդակի դեպքում սպառողների թիվը կավելանա: